ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ստ. Դ. Լիսիցյանը պատկանում էր գիտական ու մանկավարժական գործիչների այն սերնդին, որը 19-րդ դարի վերջերին և 20-րդ դ. առաջին կեսին հայ ժողովրդի լուսավորության, մշակույթի և գիտության զարգացման գործում խոշոր դեր է խաղացել:

Ստ. Լիսիցյանը շուրջ 60 տարի անխոնջ կերպով գործեց հայագիտության ասպարեզում և աշխի ընկնող վաստակ թողեց. Հայաստանի ազգագրության. աշխարհագրության և պատմության ուսումնասիրության բնագավառներում:

Նշանակալից է Ստ. Լիսիցյանի վաստակը հատկապես ազգագրության ասպարեզում: Նա ազգագրությամբ սկսել է զբաղվել դեռևս 19-րդ դարի վերջերից, սակայն 20-րդ դարի 20-ական թվականներին իրեն գրեթե ամբողջությամբ նվիրեց այդ գործին և երկար տարիներ գլխավորեց սովետահայ ազգագրությունը:

Ստ. Լիսիցյանի լավագույն գործերից մեկը «Ուրվագծեր նախառևոլյուցիոն Հայաստանի ազգագրության» աշխատությունն է, որը լույս տեսավ հեղինակի մահից հետո «Кавказский этнографический сборник»-*ում*, вып. I, М., 1955 և վերահրատարակվեց «Народы Кавказа», II հ. (Серия «Народы мира», М., 1962).

Ազգագրական նյութերի հավաքումը ավելի սիստեմատիկ դարձնելու և գիտական հիմունքների վրա դնելու նպատակով Լիսիցյանը կազմել է «Ազգագրական հարցարան», որի լույս ընծայումը 1946 թ. նկատելիորեն նպաստեց ազգագրական նյութերի հավաքման աշխատանքներին: Այդ հարցարանով այժմ առաջնորդվում են ոչ միայն մեր ազգագրագետները, այլև հարյուրավոր ուսուցիչներ և ուսանողներ:

Լիսիցյանը Հայաստանում և Անդրկովկասի հայաբնակ տարբեր շրջաններում տարիներ շարունակ մեծ եռանդով հավաքել և գրի է առել մեծ ճանկությամբ նյութեր, որոնք աշխի են ընկնում լայն ընդգրկումով և բազմազանությամբ:

Ներկա մենագրությունը՝ «Զանգեզուրի հայերը» կարևոր տեղ է գրավում Ստ. Լիսիցյանի աշխատությունների շարքում:

Այն ընդգրկում է անցյալ դարի վերջերի և քսաներորդ դարի սկզբների ազգագրական հարուստ նյութերը, որոնց մեծ մասը հեղինակը հավաքել է 1920—30-ական թվականներին: Ուսումնասիրության առարկան է՝ Զանգեզուրի նյութական ու հոգևոր մշակույթը, տնտեսությունը, զբաղմունքները, երկրագործության տեխնիկան, տնայնագործությունը, արհեստները, աշխա-